ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՆԻՍՏ N9

ՈՐՈՇՈՒՄ

25 սեպտեմբերի 2024 թվականի N26-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել համայնքի ավագանու թիվ 9-րդ հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	դեմ	ձեռնպահ
1.Աբասյան Քյարամ Զորբայի			
2.Քալաշյան Թոռուն Ամարի			
3.Շամոյան Մաջիթ Ագիթի			
4.Շառոև Զոհրաբ Մամեի			

Համայնքի ղեկավար՝ *Ռ. Հասանյան*

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 9 նիստի N26-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ. Հասանյան

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. Ռ. Հասանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՆԻՍՏԻ N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2024 թվականի N 27-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ֆերիկ համայնքապետարանի 1997-2019 թվականը ներառյալ համայնքային սեփականություն համարվող արխիվացման ենթակա արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես պետական սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝ Կողմ -4 դեմ -0 ձեռնպահ-0

1.Աբասյան Քյարամ Զորբայի
2.Քալաշյան Թոռուն Ամարի
3.Շամոյան Մաջիթ Ագիթի
4.Շառոն Զոհրաբ Մամեի

Համայնքի ղեկավար՝ *Ռ. Հասանյան*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ֆերիկ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

Ֆերիկ համայնքապետարանի 1997-2019 թվականը ներառյալ համայնքային սեփականություն համարվող արխիվացման ենթակա արխիվային փաստաթղթերը «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցելու համար անհրաժեշտություն է առաջացել «Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին» ընդունել Ֆերիկ համայնքի ավագանու որոշում:

«Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին» Ֆերիկ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո առաջանում է համայնքի ղեկավարի «Փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելը կազմակերպելու համար փորձագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» կարգադրության ընդունման անհրաժեշտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ռուստամ Հասանյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆերիկ համայնքի ավագանու «Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Ֆերիկ համայնքի բյուջեի եկամուտների և ծախսային մասերում փոփոխություններ չեն սպասվում:

Առաջատար մասնագետ՝ Հ. Խաչատրյան